ԿԱՐԾԻՔ

Հմայակ Վահանի Մանուկյանի՝ ‹‹Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային եվ սոցիալ-հոգեբանական գործոնները (քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում)›› թեմայով

ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն) մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի մասին

Մերօրյա սոցիալ-տնտեսական և տեխնիկական զարգացումները թելադրում են նոր հնարավորություններ կոնֆլիկտների և բախումների կոնստրուկտիվ լուծումների համար: Շատ հաճախ հակամարտություններում հաջողության հասնելու համար առաջնայնությունները վերապահվում են միջնորդներին, որոնց գործունեությունը և ներկայությունը հնարավորություն է ընձեռում հակամարտող կողմերին կազմակերպել իրավունքների և հոգեբանական բնութագրերի փոխադարձ քննարկում և արդյունքում ընդունել փոխշահավետ որոշումներ :

Փոխակերպվող հասարակություններում սոցիալական կոնֆլիկտները պայմանավորված են սոցիոմշակութային և շարժառիթների հաղթահարման միջոցով: Հաշտարարության ինստիտուտը գործող համընդհանուր համակարգ է ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ռուսաստանում ինչը նպաստում է լուծում է պետության, քաղաքացու, կազմակերպությունների միջև առաջացած տարաբնույթ խնդիրները: Հայաստանի Հանրապետությունում այդ համակարգը գտնվում է ձևավորման փուլերում և պահանջում է համալիր գիտական մոտեցում թե՛ հաշտարարության ինստիտուտի ձևավորման, թե այդ համակարգի նկատմամբ վերաբերմունքի, թե՛ հաշտարարների ընտրության և թե՛ գիտելիքի իմացության հարցերում:

Պայմանավորված վերոշարադրյալով՝ ժամանակակից հասարակական կյանքում հաշտարարի ինստիտուտը դառնում է պահանջված թե՛ իրավաբանության ոլորտում, և թե՛ հոգեբանության ոլորտում հաշտարարի գործունեության

արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոններով, հոգեբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի իմացություններով: Կարևորելով հոգեբանական բաղադրիչը՝ հաշտարարներն ապահովում են ճանաչողական խոչընդոտների, հուզական և հաղորդակցման գործընթացում խնդիրների կարգավորումը, ինչպես նաև բանակցային գործընթացում փնտրում և գտնում կոնֆլիկտող կողմերի հաշտեցման արդյունավետ միջոցներ: Հոգեբանական գիտելիքի իմացությունը հնարավորություն է ընձեռում հաշտարարին կոնֆլիկտի լուծման ընթացքում տարանջատել և համադրել օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, հնարավոր լուծումներ տալ միջանձնային հարաբերություններում :

Տվյալ հետազոտության արդիականությունը հեղինակը հիմնավորում է նրանով, որ սոցիալ–քաղաքական երևույթներն ընթանում են տարբեր լարվածությամբ: Պաշտոնական կոնֆլիկտները լուծվում են օրենքների և նորմատիվային ակտերի հիման վրա: Դրանցում առավել մեծաթիվ են քաղաքացիաիրավական բնույթի կոնֆլիկտները, որոնց լուծումները նույն պես հնարավոր է գտնել օրենսդրական ակտերի շնորհիվ, ինչն էլ իր արտացոլումն է գտնում մարդկանց միջանձնային հարաբերություններում: Նմանատիպ գործընթացները ակտիվացնում են հարաբերությունների լարվածությունը:

Հեղինակը հաշտարարությունը դիտարկում է որպես մոտեցում, որպես գործընթաց՝ տալով կիրառական նշանակություն: Հաշտարարությունը՝ որպես մոտեցում դիտարկելիս, շեշտադրում է ոչ թե օբյեկտիվ ճշմարտությունը, այլ երկու կողմերի համար ընդունելի գաղափարների և փորձի մշակումը: Կարելի է ենթադրել, որ քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային եվ սոցիալ-հոգեբանական գործոնները ուսումնասիրելիս ատենախոսը միանշամշնակ անդրադառնում է սոցիալական գիտությանը, մասնավորապես հոգեբանությանը, որպես նեղ մասնագիտական ոլորտի: Ատենախոս Հ.Վ.Մանուկյանը սահմանել է

հետազոտության օբյեկտը , առարկան, նպատակը, առաջ է քաշել երկու վարկած, առաջին, նա գտնում է, որ հաշտարարի մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է անձնային և մասնագիտական մի շարք հատկություններով, մասնավորապես ստեղծարարությամբ, ճկունությամբ, իրավիճակում արագ կողմնորոշվելու ունակությամբ, հուզական կայունությամբ, տրամաբանական և վերլուծական մտածողությամբ, հանդուրժողականությամբ, անձնային և իրավիճակային կանխատեսմամբ, չեզոքություն ապահովելու ունակությամբ, ինչպես նաև վարքային ռազմավարության ընտրության զգոնությամբ: Երկրորդ վարկածով ենթադրվում է, որ քաղաքացիաիրավական ոլորտում առաջացող քաղացիաիրավական վեճերի լուծման հաշտարարական միջոցների լայնածավալ և արդյունավետ կիրառման սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտներից է մեր հասարակության մեջ հաշտարարության ինստիտուտի գործառույթների վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածությունը և հաշտարարության նկատմամբ վստահության ցածր մակարդակը:

Ատենախոսը հաշտարարի մասնագիտական գործունեության մեջ առաջ է քաշում և կարևորում հոգեբանական բաղադրիչը, այն զուգորդվելով հակահասարակական վարքին նպաստող մյուս սուբյեկտիվ գործոնների առանձնահատկությունների հետ:

Հետազոտության հիմքում դնում է այն անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք պայմանավորում են հաշտարարի արդյունավետ գործունեությունը:

Հիմնվելով մասնագիտական գրականության վերլուծության վրա՝ հեղինակն հետազոտության շրջանակներում առանձնացրել և կոնտենտ վերլուծության միջոցով բացահայտել է հաշտարարության ինստիտուտի կայացման նախապայմանները և հաշտարարի մասնագիտության հիմնական առանձնահատկությունները: Ուսումնասիրել քաղաքացիաիրավական ոլորտում հաշտարարության գործընթացի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն ու դրանց մասին բնակչության

իրազեկվածության աստիճանը, պարզաբանել հաշտարարության գործառույթների, ձևերի ու նշանակության վերաբերյալ գիտելիքների և վերջիններիս հանդեպ վստահության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Արձանագրել հաշտարարության ինստիտուտի հանդեպ բնակչության վստահության և իրազեկվածության աստիճանը, հաշտարարության գործառույթների, ձևերի և նշանակության վերաբերյալ գիտելիքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, թեստավորման և հարցումների միջոցով գնահատել ՀՀ-ում գործող հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունները, դրանց փոփոխությունները մասնագիտական փորձի ազդեցության ներքո: Մշակել հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունները զարգացնող համակարգված բանաձև (մագիստրոսական և հետբուհական կրթական մակարդակներում), իրականացրել գիտափորձ հաշտարարության մասին ուսանողների իրազեկվածության, նրանց գիտելիքների և վստահության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման համար: Էմպիրիկ փորձագիտական ճանապարհով և սոցիոլոգիական հարցման արդյունքների համադրության հիման վրա դուրս է բերել և տվել քաղաքացիաիրավական ոլորտում գործող հաշտարարի մասնագիտագիրը (պրոֆեսիոգրաման) և անձի հոգեբանական «գծապատկերը»: Առանձնացրել գործնական առաջարկներ՝ միտված հաշտարարության ինստիտուտի ընկալման վերաբերյալ, մշակել բարելավմանն ուղղված սոցիալ-հոգեբանական միջոցներ, ինչպես նաև հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունները զարգացնող համալիր միջոցառումներ: Ըստ հեղինակի վերլուծության հաշտարարների մասնագիտական հմտությունների և կարողությունների, գործառույթների, կարգավիճակի վերաբերյալ հարցերը, ինչպես նաև ռազմավարությունների, մեթոդների և տեխնոլոգիաների ընտրության հարցերը գտնվում են տարբեր գիտակարգերի հետաքրքրությունների շրջանակներում և կրում են սինթետիկ բնույթ: Չնայած ժամանակակից հասարակությունում հաշտարարության նշանակալի դերին և տեղին՝ այսօր էլ դեռ

մնում են արդի գիտական և լուսաբանող գրականության հրապարակման հարցերը, ընդհուպ բաց են մնացել այնպիսի հարցեր, ինչպիսիք են հաշտարարության վերաբերյալ իրազեկման ընթացակարգերը և գործընթացները, ինչպես նաև հաշտարարների պատրաստման գործընթացում հոգեբանական բաղադրիչի ուսումնասիրությունները: Առաջնորդվելով վերոնշյալից հեղինակը ներկայացնում է մշակված մոտեցում «հաշտարարի պատրաստման թիրախային համակարգ» :

Ատենախոսը փորձարարական հետազոտություններն իրականացրել է 4 փուլով 2018-ից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում: Ըստ հեղինակի հետզոտության ընտրանքը համալրել են 373 մասնակից՝ իրավաբանական գործունեություն ծավալող 50 աշխատակիցներ, որոնց մասնագիտական գործունեությունն ուղղված է եղել հաշտարարության այս կամ այն ձևին: Ընդ որում, հետազոտական ընտրանքը, ըստ մասնագիտական կայացման փուլերի, բաժանել է երկու խմբի՝ փորձարարական և համեմատական: Փորձարարական խումբը ներգրավվել են ՀՀ-ում գործող տարբեր ոլորտների հաշտարարներ: Համեմատական խումբը կազմել են իրավաբանության և հոգեբանության ֆակուլտետների 120 ուսանողներ: Հետազոտության որոնողական փուլին մասնակցել են 63 քաղաքացիներ: Տվյալ փուլի նպատակն է եղել հետապնդել և պարզել քաղաքացիների իրազեկվածության աստիճանը, ինչպես նաև հաշտարարության ինստիտուտի հանդեպ նրանց վերաբերմունքը: Հետազոտությանը մասնակցել են նաև գործող հաշտարարների 15 հաճախորդներ, որոնք գնահատել են իրենց հաշտարարների մասնագիտական կոմպետենտության ձևավորվածության աստիճանը: Սոցիալ-հոգեբանական հարցմանը և փորձարկմանը մասնակցել են 120 ուսանողներ: Արդյունավետ է հեղինակի կողմից կատարված 4-րդ փուլի վիճակագրական և որակական վերլուծությունները, որոնց հիման վրա ձևավորվել են հաշտարարության ինստիտուտի կայացման, հաշտարարների մասնագիտական կարևոր հատկությունների զարգացման գործնական առաջարկները:

Հեղինակն աշխատանքում յուրովի է մեկնաբանում պաշտպանությանը ներկայացված դրույթները: Օրինակ, ըստ նրա հաշտարարների պատրաստման գործընթացում հոգեբանական բաղադրիչի՝ միջանձնային հարաբերությունների, հաղորդակցման հմտությունների, անորոշ իրավիճակներում որոշում կայացնելու, հուզական ինտելեկտի և այլ հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ կրթվածության համապատասխան մակարդակը կնպաստի հաշտարարության ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը, ինչն էլ իր հերթին կթեթևացնի տարբեր ոլորտների առանձին վերցրած և պետության, ամբողջությամբ առած, ֆինանսական, սոցիալական բեռը: Կամ հաշտարարության գործունեության ընթացքում հաշտարարների հոգեբանական դիմանկարը ենթարկվում է տարբեր բնույթի կոնֆլիկտների հանգուցալուծման գործընթացում գործառական փոփոխությունների, ինչն էլ նպաստում է գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Նմանատիպ մոտեցումների, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների, առանձնահատկությունների վերլուծությունների արդյունքում ատենախոսն տեսական և փորձարարական հետազոտության արձանագրած փաստերի և վերլուծած նյութի միջոցով մշակել է գործնական առաջարկներ :

Աշխատանքը բաղկացած է ներածությունից երեք գլուխներից, եզրակացություններից, նկարներից և մեծաքանակ գրականության ցանկից:

Սակայն այս ամենի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ աշխատանքում կան վիճահարույց հարցեր և բացթողումներ.

1. Ատենախոսական աշխատանքը բավականին ծավալուն է և բազմաբովանդակ, սակայն ցանկալի կլիներ, որ ատենախոսի կողմից առավել ընդգրկուն ներկայացվեր արդիականությունը:

2. Գտնում ենք, որ հետազոտության առարկան կարիք ունի վերձևակերպման :

3. Ատենախոսության հետազոտության ընտրանքը բավականին մեծաթիվ է, բազմաշերտ, ընդգրկում է մասնագիտական տարբեր ոլորտներ,սակայն ներածության հատվածում և սեղմագրում երևում է միայն ընդհանուր թիվը ինչը հնարավորություն չի ընձեռում արտահայտելու և պատկերացում կազմելու ընդհանուր հետազոտության վերաբերյալ :

4.Ատենախոսի կողմից ներկայացրած աշխատանքը կշահեր, եթե հետազոտական հատվածում առկա լիներ նաև աղուսյակներով վերլուծություններ:

Կարծում ենք նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է բավականին մեծածավալ տեսական վերլուծություն և բազմաբովանդակ փորձարարական հետազոտություն:

Ատենախոսությունը գիտական պատշաճ, գրագետ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հմայակ Վահանի Մանուկյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ.Ռ. Արամյան

Լ.Ռ. Արամյանի ստորագրությունը հաստատում եմ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ.Մ.Իսպիրյան

17.12.2020թ.